

իշխանութեան կանոնաւորեալ կազմութեան, որ հզօր մարմին էր ձեւացեալ վերուստ ի վայր եւ զօրաւոր կապով շղթայալ: Տգետ կամ գիտուն այդ եկեղեցական կազմութիւնը քիւզանդական բոլոր աստուածաբանական ուսմանց — նրբութեանց եւ իմաստականութեանց հետ կրցաւ մաքառիլ ու մրցիլ: Մերժեց նորա իրաւացի եւ անիրաւի ուղղափառ կամ չարափառ պահանջմունքները եւ մնաց անթափանցելի ամեն վիճաբանութեանց եւ ամեն հալածանաց դէմ եւ անխախտ պահեց ինչ որ անգամ մը Լուսաւորչէ առած էր:

Կաթողիկոս մը կը հնազանդէր կամ կը խոնարհէր Զերակլ կամ Կոստանդին կայսերաց, բայց եկեղեցական մարմինը եւ ժողովուրդը անշարժ կը մնար հայրենի կրօնական դաւանալթեանց իմանալով կամ չիմանալով: Եւ այդ կաթողիկոսը կամ իւր յաջորդը վերջը-վերջը պետք էր ընդհանուրին հետեւեր, եթէ չուզէր բաժանակից սատանայի համարուիր

Եթէ թագաւորութիւն կամ նախարարութիւն կարէնային զօրաւոր կառավարութեան մը ձեւ առնուլ եկեղեցական իշխանութեան պէս, այն ժամանակ անիշխանութեան վտանգէն ազատ կը լինէր Զայաստան եւ կրնար ակնածելի լինիլ իր զօրաւոր դրացեաց: Բայց դժբախտաբար երբեք նախարարութիւնը այդ չէր խորհած, եւ որ շատ կարելոր ու գործադրելի էր այս միջոց ժամանակիս մէջ, արուն պատմութիւնը կը գրենք:

Եւ Թեոդորոս Ռշտունի կը մտածէր, այդ մարդը որ «մորմոքեալ ընդ կորուստ աշխարհին», Յունաց յիմար Սպարապետին ամբարտաւան անհոգութիւնը չէր կրցեր շարժել եւ իր յորդորներով ոչ օգուտ այլ նախատինք քաղէր էր: Զիմա որ ականատես էր՝ ինչ որ արդէն գուշակէր էր, աւերմունք հրայրեացք՝ կոծ ու լաց կը տեսներ եւ կը լսէր, եւ ինչ դարման որ կարելի էր, կ'ըներ, եւ այնպէս կը շարունակէր իր ճամփան անցնելով Գողթան, Նախջեւան, Կոզովիտ, ուր դառն հայեցումածք մը ձգեց Վարդանաբերդի վրայ. կ'երթար Տայոց գաւառը թիկնապահաց վթորիկ խումբով մը եւ կ'իջներ ի Թաւուսկերտ աւան, ուր հին ապարանքն էին Տայոց Բագրատունի իշխանաց, եւ ուր կը բնակէր միայնակ նոյն ժամանակներ Զամասպրուհի տիկին, մայր Վարագտիրոցի, կին Սմբատ Մարգականին Զայոց եւ Վրկանաց, որուն քաջութեանց համբաւը հռչակեալ էր բոլոր արեւելք եւ որ այնչափ սիրելի եղած էր Պարսից թագաւորին իւր հաւատարմութեամբ եւ որուն յիշատակը կը պատուէր Թեոդորոս Ռշտունի իւր հայր եւ վարժիչ պատերազմական արիեստից անուանելով: Մանաւանդ որ սերտ բարեկամութեամբ կապուած էր Վարագտիրոց Ասպետի՝ նորա որդուոյն հետ, որ նոյն ժամանակները Արշիպեղագոսի մէկ կղզին աքսորեալ էր ընտանեօք Զերակլ կայսրէ: